«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Համո Սահյանի պոեզիայի դասավանդման մեթոդաբանությունը
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Լիանա Մամուլյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գ. Մահարու անվան հ.176 հ/դ

Բովանդակություն

Ներածություն 2
ԳԼՈՒԽ 1. 4
Համո Սահյանն ու բնությունը 4
1.1 Բնությունը Համո Սահյանի պոեզիայում 4
1.2 Համո Սահյանը ու նրա քնարերգությունը 5
ԳԼՈՒԽ 2. 7
Համո Սահյանի պոեզիայի դասավանդման մեթոդաբանությունը 7
2.1 Դասի վարումը ԽԻԿ համակարգով: 7
2.2 Քարտեզագրում 9
2.3 ԳՈՒՍ մեթոդը 10
ԳԼՈՒԽ 3 11
Միջառարկայական կապեր 11
3.1 Միջառարկայական կապ / Պատմություն, աշխարհագրություն երաժշտություն/ 11
Եզրակացություն 17
Օգտագործված գրականություն 18

Ներածություն

Միջնակարգ կրթության շրջանակներում և տարամեթոդ ու այլընտրանքային հայեցակարգով գործող դպրոցի առկայության պայմաններում ապահովել հայերենի՝ որպես մայրենի լեզվի հայ և համաշխարհային գրականության ուսացման միատեսակ վերջնական արդյունքներ՝ արդի հասարակության մեջ ազատ և նպատակահարմար հաղորդակցվելու՝ սեփական մտքերը գրավոր և բանավոր շարադրելու, հանրային կյանքի ամենատարբեր բնագավառներում խոսքային գործունեություն իրականացնելու միասնական կարողությունների ու հմտությունների, գրական գիտելիքների ու ճաշակի մշակման տեսանկյունից: Գեղարվեստական գրականության դասավանդման ընթացքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում գեղարվեստական խոսքի ընկալման, ձևավորման հարցը: Ինքնատիպ է Համո Սահյանի պոեզիան՝ իր գեղարվեստական պատկերամիջոցների համակարգով: Հարց է ծագում՝ որ ուղին ընտրել. ապավինել միայն դրսեկ ծրագրերին, թե ստեղծել ազգային արմատներով և միջազգային չափանիշներով կրթության նոր համակարգ: Համոզված ենք՝ երկրորդը:

Հանրակրթության այսօրվա պահանջներից մեկը ուսումնաճանաչողական և, ընդհանրապես, մտավոր գործողություններ կատարելու համար անհրաժեշտ մտածողության ձևերի ու մեթոդների յուրացում ապահովելն է, սովորել սովորեցնելը:

Պահանջը ինքնին նոր չէ: Նոր չէ նաև մանկավարժության փորձով փաստվող իրողությունը. դաս-դասարանական համակարգով ամրագրված ավանդական ուսուցման պայմաններում եթե ոչ անհնար, ապա անչափ դժվար է խնդրի իրագործումը: Պատահական չէ, որ դասավանդման արդյունավետ եղանակն իր տեղն աստիճանաբար զիջում է համագործակցության, սովորել սովորելու իրական հնարավորություններ ենթադրող մեթոդ-եղանակների /այդպիսի մեթոդ է խմբային մեթոդը/:

Նպատակահարմար է կազմել 2 պլան՝ ընդհանուր /տարվա համար/ և ընթացիկ կամ ամենօրյա: Ավանդական կրթական համակարգի պլանի նմանողությամբ հանդերձ՝ ընդհանուր պլանն ունի ընդգծված տարբերություններ: Ընդհանուր պլանով որոշակիորեն սահմանվում է ինչ սովորեցնել և ինչու հիմնախնդիրը: Պլանավորման այս ձևը օգնում է ուսումնական առարկայի կրթական խնդիրների լուծումը դիտարկել պետական կրթական քաղաքականության պահանջներին և նպատակներին համապատասխանության, այդ միասնության մեջ:

ԳԼՈՒԽ 1.

Համո Սահյանն ու բնությունը

1.1 Բնությունը Համո Սահյանի պոեզիայում

Բանաստեղծներն ունեն մի << արտոնություն>>, որով տարբերվում են ուրիշ զբաղմունքի և ուրիշ ասպարեզի մարդկանցից:Բանաստեղծների մասին, որպես օրենք, դատում են միայն լավ ու հասունգործերի հիման վրա:

Ժողովածուներ- 1. <<Որոտանի եզերքին>>-1946թ.

2. <<Նաիրյան դալար բարդի>>-1958

3. << Քարափների երգը>>-1968

4. <<Սեզամ, բացվիր>>-1972

5.<<Ինձ բացակա չդնեք>>-1998 /հետմահու/

Համո Սահյան….<<Որոտանի եզերքից>> հասավ մինչև 1998թ. Վերջին՝ <<Ինձ բացակա չդնեք>> ժողովածուն հեղինակի վերջին տարիներին գրած անտիպ բանաստեղծություններն են: Այս գրքով Սահյանը հանրագումարի է բերում անցած տարիները, համակերպվում կյանքի մայրամուտին մոտենալու տխուր փաստի հետ:

Ճակատագրական 90-ականներին / արտագաղթ, հայաթափում, ցուրտ, սով/ անուշադրության կենտրոնում հայտնված, հուսահատված, հիվանդ ու հյուծված բանաստեղծը գերմարդկային լարումով ուժ է գտնում իր մեջ՝ օգնության ձեռք մեկնելու իր տառապյալ ժողովրդին: Գրականությունը խոսքի արվեստ է (Գրականության տեսության արդի հիմնահարցեր, էջ 15). գրական երկի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու և վերլուծելու տեքստի ենթիմաստը, հեղինակի ասելքը, գրողի՝ տեքստ ստեղծելու վարպետությունը, խոսքի ոճական առանձնահատկությունները, պատկերավոր խոսքի գեղագիտությունը:[1]

---

[1] . ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՄԱՅՐԵՆԻ» 1-6-ՐԴ, «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ» 7-12-ՐԴ, «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» 7-9-ՐԴ ԵՎ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» 10-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ: (1. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ)

<<Ինձ բացակա չդնեք>> կարապի երգը հանդիսացող ժողովածուն դարձավ նրա անմահության առհավատչյան:

1.2 Համո Սահյանը ու նրա քնարերգությունը

XII դաս, աշակերտները Համո Սահյանի ու նրա քնարերգության մասին գիտեն 7-րդ դասարանից /գրառված և պահված տետրերից կարդում են/:

Ծանոթ են <<Ժամանակակիցները Հ. Սահյանի ու նրա քնարերգության մասին>> Պազմիկ Դավոյանի, Լևոն Հախվերդյանի, Վահագն Դավթյանի, Մարտիրոս Սարյանի, Կայսին Կուլիևի, Էդուարդ Մեժելայտիսի, Լև Օզերովի արտահայտած մտքերից:

Ծրագրային ստեղծագործություններից գիտեն <<Անտառում>>, <<Մասրենի>>, <<Ախր ես ինչպես…>> բանաստեղծությունները, ինչպես նաև Սահյանի թևավոր խասքերից:

Ծառը լաց է լինում, օգնություն է ուզում, թթվածին է ուզում: Ծաղիկը, ծառը չլինեն, մարդ կխելագարվի: Թվում է, թե իրենք հանգիցտ են: Դա խաբկանք է: Իրենք էլ են անհանգիստ: Ծառն ու ծաղիկն էլ իրենց ցավն ունեն: Մարդ իր կորցրած ազնվությունը բնությամբ կարող է գտնել: Մարդ պետք է ապրի ծառի օրենքով. Արմատով հողի խորքը ձգվի, սախարթով տարածվի դեպի արևը: Արմատը մեր հիշողությունն է, որ գնում է դեպի սկիզբը, դեպի պատմության խորքը, գնում է զորանալու… Եթե մեկը անցյալդ է ուզում գողանալ, վերագրել իրեն, ինչ ասել կուզի, պատրաստվում է զրկել քեզ ապագայից:

Աշակերտներին նախապես հարձնարարվել էր կարդալ Հ. Սահյանի ժողովածուները և ձեռքի տակ ունենալ դասի ընթացքում:

Հայ գրականություն

Դասարան- 7-ՐԴ

Թեմա – Համո Սահյանի պոեզիայի դասավանդման մեթոդաբանությունը

Դասի տևողությունը---45 րոպե

ՈՒսումնական նպատակը—Հայրենասիրության զարգացում, հայրենասիրական ստեղծագործության հիմնական գաղափարի ընկալում, պատկերային համակարգի առանձնահատկությունների ընկալում, ասմունքելու վարպետություն, իրար լսերու, կարծիք հարգելու անձնային որակների բացահայտում, իրար հարցեր ուղղելու, խոսքը ճիշտ

կառուցելուունակություն, ստեղծագործական երևակայության բացահայտում և զարգացում:

ՈՒսումնական գործունեություն/ կամ գործունեության ձևերը- Բանաստեղծությունների լուռ և բարձրաձայն ընթերցամ, հարցերի ձևակերպմամբ փոխստուգում, բառային և պատկերային համակարգերի ուսումնասիրություն և վերլուծություն, պատկերավոր արտահայտությունների առանձնացում և խմբավորում, հաղորդումներ և զեկուցումներ / հայրենասիրական քնարերգութ, թեմաներով/ խաչբառերի, գրքույկների կազմում, ստեղծագործական աշխատանք սովորած բառերի, արտահայտությունների գործածություն ինքնուրույն շարադրությունների մեջ, կենսագրական, բանաստեղծություններ:

Մեթոդներ/ հնարներ, վարժություններ/- ԳՈՒՍ, խմբային աշխատանք,փակ և բաց հարցեր. Վենի դիագրամ, քառաբաժան, պրիզմա, <<Հեղինակի աթոռ>>

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու/ ոճաբանություն, բառագիտություն/, պատմություն, աշխարհագրություն,արվեստ/ կերպարվեստ,

երաժշտություն, քանդակագործություն/

ԳԼՈՒԽ 2.

Համո Սահյանի պոեզիայի դասավանդման մեթոդաբանությունը

2.1 Դասի վարումը ԽԻԿ համակարգով:

Դասի ընթացքը

Քայլ1: Խմբերի ստեղծումՀ Սաահյանի բանաստեղծությունների միջոցով: Աշակերտներին բոժոնում ենք առանձին թերթիկներ, որտեղ գրված են բանաստեղծությունների /խմբերի քանակով/ տողեր: Յուրաքանչյուրն ընտրում է մի թերթիկ, ուր որևէ բանաստեղծության մեկ տողն է: Բաժանելուց հետո առաջադրվում է շրջել դասարանով և գտնել նույն բանաստեղծության տողն ունեցողին: Այսպես միևնույն բանաստեղծության տողերով ձևավորվում են խմբեր:

Ստեղծվում են հենակետային 4 խումբ՝ կախված աժակերտների քանակից:

I Քառատող - I խումբ

II Քառատող - II խումբ

III Քապատող III խումբ

IV Քառատող IV խումբ

Քայլ 2: Խթանման փուլ: Աշակերտների ձեռքի տակ են Հ. Սահյանի բանաստեղծությունների ժողովածուները:

Տրամադրող մթնոլորտ ստեղծելու համար կարելի է աշխուժացնող վարժություններ կատարել / << Անձրև>>, << Ծափեր>>/, որպեսզի ստեղծվի դրական վերաբերմունք և պատրաստակամություն՝ մասնակցելու դասի ընթացքին

Խթանման փուլում կիրառում ենք <<Մտագրոհ>>-ի մեթոդը: Ընտրում ենք հիմնաբառը և դրա շուրջն աշակերտներն ասում են մտքում եղած առաջին բառը:





Որպես հիմնաբառ կարող ենք վերցնել խորհրդանիշներ հանդիսացող քար, քարափ, մասրենի, անտառ, Լորագետ և այլ բառեր:

<<Մտքերի տարափ>> մեթոդով խրախուսվում է ցանկացած գաղափար, գրառվում են բոլորի մտքերը: Այս մեթոդով վեր են հանվում աշակերտների նախնական գիտելիքները: Դասի վերջում՝ կշռադատման փուլում, երբ աշակերտները ծանոթացել կամ յուրացրել են թեման, նյութը անպայման անդրադարձ է կատարվում մտագրոհի արդյունքներին՝ ճշտելով, ուղղելով, լրացնելով, ամբողջացնելով նախնական մտքերի ու գաղափարների ցանկը:

2.2 Քարտեզագրում

Հասկացողության սահմանման քարտեզ



Քարտեզագրում

Այստեղ շրջանի մեջ են առնվում թեման, գաղաթարը կամ հասկացողությունը, այնուհետև առանձին հասկացողության շուրջ գրի են առնվում ուղեկից բառեր:

Այսպես տարբեր հասկացողությունների շուրջ քարտեզը ընդլայնվում է: Ճյուղերը տարածվում են՝ ուղեկից բառերից դուրս բխելով: Յուրաքանչյուր բառ գծիկով միանում է<<ծնող>> բառին:

Կարևորն այստեղ այն է, որ արդյունքում ստացվի մի պատկեր, որին հաջորդելու է որոշակի գաղափարների նպատակային ուսումնասիրություն:

2.3 ԳՈՒՍ մեթոդը

Խթանման փուլում կիրառվում է նաև ԳՈՒՍ-ի մեթոդը.

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի
Համո Սահյանի կենսագրությունը 7-րդ դասարանից անցել ենք Նշանավոր մարդկանց խոսքը նրա մասին/Ռազմիկ Դավոյան,Լ Հախվերդյան, ԿԿուլիեվ, Էդ Մեժելայտիս, Վ Դավթյան, ՄՍարյան, Լև Օզերով Անցել ենք նաև Մասրենի, Ախր ես ինչպես Անտառում Սահյանի խսքերով երգեր են գրվել Տիգրան Մանսուրյան Մայրամուտի երգեր,,վոկալ շարքը	Ժողովածուների մասին նրա փիլիսոփայական մտքերից ինչ թեմաներով է ստեղծագործել Ով կամ ինչն է եղել նրա ոգեշնչման աղբյուրը	

Իհարկե այս մեթոդը կկիրառվի խթանման փուլում, բայց կուղեկցվի մինչև դասի վերջ, որտեղ աշակերտը կշռադատման փուլի վերջում դասի ավարտից երկու րոպե առաջ կլրացնի, թե ինչ ցովորեց դասից:

Յուրաքանչյուր խումբ ձեռքի տակ կարող է ունենալ նույն ժողովածուն / 2-3 գիրք/:

ԳԼՈՒԽ 3

Միջառարկայական կապեր

3.1 Միջառարկայական կապ / Պատմություն, աշխարհագրություն երաժշտություն/

Միջառարկայական կապ / երաժշտություն/ հնչում է <<Նաիրյան դալար բարդի>> երգը, խմբերն աշխատում են: Հանձնարարություն խմբերին: Ստեղծագործություններից գտնել աշխարհագրական անուններ, որոնք ոգեշնչման աղբյուր են եղել Հ. Սահյանի համար:

Պահանջ: Գտնել հայրենիքին նվիրված ստեղծագործությիններ, դուրս գրել խորհրդանիշներ, որոնք կներկայացնեն հայրենիքը:

Խմբում առանձնացնում ենք դերերը /աշակերտների նախաձեռնությամբ/:

1. Ժամանակին հետևողներ /հիշեցնում է ժամանակը/:

2. Խրախուսող, գովաբանող /խրախուսում է խմբի յուրաքանչյուր լավ աշխատանքը և գովաբանում ներդրումները:

3. Դիտորդ խմբի աշխատանքի ընթացքում դիտորդական թերթիկում գրանցվում է յուրաքանչյուրի գործողությունները:

4. Գրառող - Գրառում է խմբի աշխատանքը, հիմնավորումներն ու լուծումները:Այն պետք է հիմք ծառայի խմբային ներկայացման համար:

Աշակերտները ընթերցելու չեն կարող չնկատել ու չհիշել Հ. Սահյանի բնապատկերների զրնգացող հանգերով:, երաժշտությամբ, ժողովրդական պատկերավորությանը համարժեք դարձվածքներով և ամենակարևորը խորհրդանիշները՝ քարափը, մասրենին, նաիրյան բարդին, Արարատ, Լորագետ, լեռներ ու փշատենի…

Սահյանը կարողացել << մի բուռ երգի մեջ>> պատկերել <<անդարձ աշխարհն իր անցուդարձով:

Սահյանի քնարն հնչում է անկրկնելիորեն նոր, երբ մեղեդի է հյուսում հայրենի հողի, հայրենի բնության,հայրենի սարերի ու քարափների մասին. Այդ նրա աշխարհն է՝ արևահամ ու ջերմացնող, հասկանալի ու հարազատ: Հայ գրականության երկերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հարստացնելու սովորողի բառապաշարը,

պատկերավոր մտածողությունը, երևակայությունը, ստեղծագործական կարողությունները, ձևավորել գրական ճաշակ և ընթերցասիրություն:[2]

Աշակերտները կարդում են իրենց գտած բանաստեղծությունների հատվածները:

ՈՒր էլ որ գնամ, աչքերիս առաջ
Քո քարափներն են շիկնելու նորից
ՈՒր էլ որ գնամ, իրար շուք արած
Քո սարերին եմ թիկնելու նորից:

/<<ՈՒր էլ որ գնամ>>/

Քարափ, սարեր
Սատանան տանի ինչ-որ հեռավոր
Նմանություն կա Խաչիպապ պապիս
ԵՎ այս հյուրընկալ քարափի միջև:

/<<Քարափը>>/

***

Օրս ուր բացվում, ուր էլ մթնում է,
Մեր Արարատյան հովիտը պերճ
Գալիս փնտրում է, գալիս գտնում է,
Գալիս մտնում է երգերիս մեջ:

/<<Արարատյան դաշտ>>/[3]

Սարերի մեջ ու ձորերի

[2] .ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՄԱՅՐԵՆԻ» 1-6-ՐԴ, «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ» 7-12-ՐԴ, «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» 7-9-ՐԴ ԵՎ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» 10-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

[3] Սահյան Հ. Ս. Երկերի ժողովածու: 2 հատորով.- Հ. 1- Եր.: Սովետ. գրող, 1984-44էջ

Մի քարեղեն իրարանցում…

ԵՎ մի քարափ քարերի մեջ,

Կանգնել է լուռ, խորհրդավոր,

Թե քայլ արավ, պիտի առնի,

Թոռ ու ծոռով իր քարեղեն

Գերդաստանն էլ հետը տանի:

Կանգնել է նա լուռ ու հանդարտ

Քայլեց, պիտի հետը տանի…

Բայց ուր տանի այս մի պատառ

Ինքնությունը Հայաստանի

/<<Բայց ու՞ր տանի>>/

ԵՎ այսպես շարունակ. Լինի Արարատյան հովիտ, թե Նաիրյան դալար բարդի, Դարպասի ձորը թե Գյազբել սարը քարը, քարափը, փշատենին ու մասրենին, այդ ամենը բանաստեղծի համար մարմնավորումն է իր հայրենիքի:

Աշակերտների աշխատանքի ընթացքում ուսուցիչը ներկայացնում է պրոբլեմային հարց.

- Կարող է Համո Սահյանը /կամ հայրենիքի մեծերը՝ բանաստեղծ, կաթողիկոս…/ Հայաստանի խորհրդանիշ համարվել:
- Աշակերտները կգտնեն անշուշտ <<Ինձ բացակա չդնեք>> բանաստեղծությունը:

Իմաստի ընկալման փուլ- Յուրաքանչյուր խումբ /սեղմագիր/ ներկայացնում է իր եզրակացությունը:

Հարց << Ի՞նչ է հայրենիքը>> :

Յուրաքարչյուր խմբից 1-2 աշակերտ ասմունքում են:

Այնուհետև կազմում են պրիզմա:

Հայաստան



Հայրենիք

Հայաստանը հայրենիքն է աշխարհասփյուռ ողջ հայության

Իրիկնահաց



Սպասում

Նահապետական գերդաստանի սպասումն էր իրիկնահացը:

Պապ



Երկինք

Իմ պապը տնկել է, ցանել է, ջրել է, ստեղծել ու հետո երկինք է վերացել:



Սահյան-գրողի գրչի տակ քարը կենդանանում է, հաղորդակցվում է բնության բոլոր երևույթների հետ: Քարերը խոսում են սահյանական անկրկնելի լեզվով: Սահյանի փիլիսոփայական մտքերը ապագային ուղղված, վերածնման կարիք ունեցող առեղծվածային խոսքեր են՝ ակնածանք ու լուծումներ պահանջող մտորումներ:

Եզրակացություն

Կատարելով սույն հետազոտական աշխատանքը՝ եզրակացնում ենք, որ բխելով ընդհանուր պլանի հիմնախնդիրներից /ի՞նչ և ինչու՞ սովորեցնել Հ.Սահյանի պոեզիայի դասավանդման ընթացքում/՝ ընթացիկ պլանը բովանդակում է ինչպես սովորեցնել խնդրի ծրագրավորումը: Սահմանվում են ուսումնական խմբի և ենթախմբի հետ տարվող աշխատանքի ձևերն ու մեթոդները, յուրացման գործընթացի կազմակերպման երթուղիները. Ուսումնական ծրագրի բաժինների մի քանի հասկացություններն ու գաղափարները:

1. Ճշտվում և հստակեցվում են սովորողների ուսումնառության կարգավորմանն ուղղված սկզբունքները և ուսումնառական հնարավոր դժվարությունները և դրանց հաղթահարման միջոցները, համագործակցության և փոխօգնության ձևերը, ուսուցման մեթոդները:

2. Նախնական նյութը բնությունն է, այս դեպքում՝ հայոց տեղային բնաշխարհը՝ Զանգեզուրը՝ իր լեռներով ու ձորերով, կածաններով ու արահետներով, բուսական ու կենդանական աշխարհով և հայաստանի համար այնքան բնութագնական քարի ու կասրենուպատկերներով: Սահյանը քարի խորհրդանշանի մեջ կարող է տեսնել մի կողմից ժողովրդի կամքի ուժը, մյուս կողմից՝ ճակատագիրը, երրորդ կողմից՝մարդու և բնաշխարհի դաշինքը:

ՈՒսուցման բովանդակային կողմին առաջադրվող պահանջները կատարելով՝, սովորողը կապահովի ուսումնական տարբեր բնագավառների միասնացումը, անհրաժեշտ գիտելիքների ծավալը, սովորողների հմտությունների, կարողությունների և արժեքային համակարգի ձևավորումը, ինչպես նաև նրանց ստեղծագործական ունակությունների խթանումը:

Այս իմաստով ընդհանուր պլանը ոչ այնքան առարկայի ուսուցման, որքան կրթական կազմակերպված ծրագիր է, որի կարևորագույն բաղադրատարրերը ուսումնադաստիարակչական գործունեության կազմակերպման հիմնարար խնդիրներն են՝ ուսումնական տնական արդյունքների ստացման տեսանելի պարզաբանումներով:

Օգտագործված գրականություն

1. Համո Սահյան, <<Բանաստեղծություններ>>, Երկեր 2 հատորով, Երևան, 1984թ

2. Համո Սահյան, <<Ինձ բացակա չդնեք>>: Բանաստեղծի վերջին ժողովածուն, Երևան 2004թ.

3. Սուրեն Աղաբաբյան, <<Արդի հայ գրականության պատմություն>>, հատոր 2, Երևան, 1993

4. Արմինե Մուրադյան, <<Կյանքի իմաստավորման գեղագիտական նոր ընկալումը Հ. Սահյանի <<Ինձ բացակա չդնեք>> ժողովածուում, ՀՊՄՀ-ի 52-րդ գիտաժողովի նյութերի ժող . 1-ին պրակ, Երևան, 2003թ

5. Աիդա Հայրապետյան, <<Սահյանի բանաստեղծական աշխարհը>>, Երևան, Սովետական գրող, 1977

6. Դավիթ Գասպարյան, Գրականություն, 7-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2011

7. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176068